

Գիտեք արդեն, որ աղջիկ - տեսի սովորությունն բոլորովին վերացուած չէ մայրաքաղաքիս մէջ: Երիտասարդներէն շատերն երբ կին մը առնել ուզեն՝ այնպէս կը վարուին, ինչպէս կը վարուիմ ես՝ երբ կով մը կամ ձի մը առնել ուզեմ. աղջիկն իրենց ազգականներուն աչերով կը տեսնեն եւ, եթէ հաւնին, սակարկութեան կը սկսին, իսկ եթէ չհաւնին, ուրիշ աղջիկ մը տեսնելու կ'երթան: Ժամանակաւ սովորութիւն կայ եղեր աղջիկներն բաղանիքի մէջ ալ քննել տալ, համոզուելու համար թէ մարմինը թերութիւններ չունի: Ա՛հ, ո՛րչափ մարմնապաշտ են մարդերն ամուսնութեան մէջ. ո՛վ մարդեր, դուք մարդ չպիտի ըլլաք: Հոգւոյն բաղանիքն ալ քաւարանն է. բայց ոչ ոք քաւարան կ'երթայ իւր առնելիք աղջկան հոգւոյն թերութիւնները տեսնելու համար... միայն այն էրիկներն, որ տգեղ կիներ ունին՝ քաւարան դրկել կ'ուզեն իրենց կիները...: Մարդերն աւելի նիւթապաշտ են քան հոգեպաշտ: Ի գուր կ'ստան աստուածաբանները, թէ հոգին մեծ է քան զմարմին. այո՛, կ'ըսեն, հոգին մեծ է քան զմարմին, բայց մարմին գեղեցիկ է քան զհոգի, եւ ամուսնութեան մէջ, կ'ըսեն, մեզի աւելի գեղեցկութիւն պէտք է քան թէ մեծութիւն: Ո՛վ յիմարութիւն....:

Ներեցեք, նիւթս քիչ մը շեղեցայ:

Տիկին Թ...ին լուր կտրուի, թէ սեպտեմբեր երեքին իւր աղջիկը տեսնելու համար քանի մը տիկիներ աղջիկ տեսի պիտի գան:

Տիկին Թ... իրար կ'անցնի եւ անմիջապէս աղջիկը կը կանչէ:

Աղջիկը վազելով կու գայ:

—Քեզ տեսնեմ, աղջիկս, կ'ըսէ տիկին Թ..., աղուորիկ մը հագուէ՛, սգուէ՛:

—Ի՞նչ կայ, մայրիկ:

—Քանի մը հիւրեր պիտի գան այսօր. անոնց առջեւը շատ մի խնդար, որ քաշել տուած ակօռներուդ տեղերը չերեւան:

—Մայրիկ, դուն ալ միշտ ակօռներս երեսս կգարնես. չորս ակօռ քաշելով ի՞նչ կ'ըլլայ եղեր:

—Չէ, որդի, քուկին բարւոյդ համար կը խօսիմ կոր. թելերուդ մէջ մէյմէկ կտոր բամպակ թխմէ, որ գէր երեւաս:

—Իմին կազմս ի՞նչ ունի որ... տձե՞ւ եմ...:

—Դուռը կը զարնեն:

—Եկան, եկան, կ'ստայ մայրն եւ դուռը բանալու կը վազէ, աղջիկն ալ հագուելու: